ԱՐՏԱՐԺՈՒԹՈՎ ԴԻԼԵՐԱՅԻՆ (ԲՐՈՔԵՐԱՅԻՆ) ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

1. Ընդհանուր դրույթներ

Սույն տեղեկատվական ամփոփագիրը հրապարակվել է 2016թ-ի մայիսին և դրանում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի ծառայությունների վերաբերյալ սպառիչ տեղեկություններ բոլոր ցանկացողները կարող են ստանալ զանգահարելով +374 (10) 538700 հեռախոսահամարով կամ այցելելով Տիգրան Մեծի պող. 32/1, թիվ 8 տարածք հասցեում գտնվող ընկերության գրասենյակ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:30-18:30:

Այս ծառայությունը մատուցվում է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում ինստիտուցիոնալ ներդրողներին:

Հաճախորդների հաշվին արժութային գործարքները կնքվում են նրանց պատվերների հիման վրա և նրանց ունեցած դրամական միջոցների շրջանակներում:

Հաճախորդների պատվերները կատարվում են գործարքների հետևյալ երկու տեսակներից մեկով.

1. ներքին գործարք, որի դեպքում գործարքի մի կողմը «ԱՐՄԵՆԲՐՈԿ»-ն է, իսկ մյուս կողմը հաճախորդը,
2. արտաքին գործարք, որի դեպքում գործարքը կնքվում է երրորդ անձի հետ: Արտաքին գործարքը իր հերթին կարող է կնքվել ինչպես ֆոնդային բորսայում, այնպես էլ դրանից դուրս, որևէ բանկի հետ:

Այս ծառայության հետ կապված հարցերը կարգավորվում են ընկերության

1. բրոքերային (դիլերային) գործունեության կանոններով,
2. արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների իրականացման կանոններով և
3. ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության փոխանակման կանոնակարգով:

Մատուցվող ծառայությունների վերաբերյալ սպառիչ տեղեկություններ բոլոր ցանկացողները կարող են ստանալ զանգահարելով +37410 538700 հեռաղոսահամարով:

2. Հաճախորդի կողմից վճարումներ կատարելու պայմանները, եղանակները, ժամկետները

Մատուցվող բրոքերային ծառայությունների սակագները սահմանված են «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրենի 28.02.2014թ-ի որոշմամբ, որը շահագրգիռ անձինք կարող են ստանալ մեր կայքից կամ այցելելով մեր գրասենյակ:

Հաճախորդի կողմից վճարումներ կատարելու պայմանների, եղանակների և ժամկետների հարցում կիրառվում է ճկուն մեխանիզմ: Դրանք սահմանվում են հաճախորդի հետ բանակցությունների արդյունքում և ներառվում են նրա հետ կնքված պայմանագրում:

3. Հաճախորդի պատվերները և առանձնահատուկ ցուցումները ստանալու նպատակով հաճախորդի հետ կապի իրականացումը

Հաճախորդի պատվերները և առանձնահատուկ ցուցումները ստանալու նպատակով հաճախորդի հետ կապը իրականացվում է նրա (նրա ներկայացուցչի) հետ անմիջական շփման, հեռախոսի էլեկտրոնային փոստի, ինտերնետի կամ ֆաքսի միջոցով:

Հաճախորդի հետ կապի իրականացման կոնկրետ միջոցները ներառվում են պայմանագրում:

4. Պայմանագրերի ժամկետները և դրանց դադարեցումը

Պայմանագրերը կնքվում են ինչպես մեկ միանվագ ծառայության մատուցման համար, այնպես էլ երկար ժամկետով: Պայմանագիրը կարող է լինել նաև առանց ժամկետի նշման, որի դեպքում այն կգործի մինչև կողմերից մեկը կդադարեցնի: Ցանկացած դեպքում հաճախորդը կարող է ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը միակողմանիորեն լուծել՝ Ընկերությանը առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու պայմանով: Այդ դեպքում պայմանագիրը լուծելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդի միջոցները կվերադարձվեն հաճախորդին կամ նրա ներկայացուցչին:

5. Հաճախորդներից գործարքների իրականացման պատվերների ընդունման և կատարման ընթացակարգերը

Հաճախորդի համար և նրա հաշվին արտարժույթով գործարքների կնքման համար հմք է հանդիսանում միայն մինչև գործարքի կնքումը հաճախորդի կողմից ներկայացված պատվերը:

Պատվերները կարող են ներկայացվել գրավոր կամ ոչ գրավոր ձևով: Գրավոր ձևով Պատվերը ներկայացվում է Հաճախորդի կողմից էլեկտրոնային փոստի, ինտերնետի կամ ֆաքսի, իսկ Հաճախորդի ցանկության դեպքում՝ թղթային ձևով: Եթե Հաճախորդի կողմից պատվերը ներկայացվում է ոչ գրավոր ձևով, ապա համապատասխան տեխնիկայի միջոցների օգնությամբ պետք է գրանցվի հաճախորդի կողմից պատվերի ներկայացման և դրա բովանդակությունը հավաստող փաստը (մասնավորապես ձայնագրվի հեռախոսազրույցը)՝ ներառյալ ներկայացման ժամանակը՝ հաջորդաբար լրացնելով տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն: Ընդ որում, այդ

տեխնիկական միջոցները պետք է թույլ չտան գրանցված տեղեկատվությունը որևէ կերպ փոխել:

Թղթային ձևով պատվերը ներկայացնելու դեպքում հաճախորդի կողմից պատվերը տրվում է 2 օրինակից, որոնցից մեկը պատվերը ընդունելու իրավասություն ունեցող անձի ստորագրությամբ վերադարձվում է հաճախորդին փոստով, ֆաքսով, առձեռն կամ էլեկտրոնային փոստով (էլեկտրոնային փոստով ետ ուղարկված պատվերը պետք է արտապատկերված և կցված լինի ուղարկված էլեկտրոնային նամակին): Էլեկտրոնային փոստով, ինտերնետով կամ ֆաքսով հաճախորդի կողմից պատվերը տրվում է մեկ օրինակից: Հաճախորդին տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցով տեղյակ է պահվում պատվերը ընդունված լինելու մասին:

Հաճախորդների պատվերները կատարելիս ընկերությանը բրոքերը պետք է՝

1. համոզվի, որ գործարք կատարելու համար պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման
2. այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարի ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում, և
3. հաճախորդին անհապաղ տեղյակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում հաճախորդի պատվերի ճշգրիտ կատարումը:

Հաճախորդի պատվերը պետք է կատարվի մինչև տվյալ պատվերի ներկայացման օրվան հաջորդող օրվա ավարտը: Եթե այդ ժամկետում հնարավոր չի լինում կատարել պատվերը համապատասխան փոխարժեքի բացակայության պատճառով, ապա պատվերը համարվում է դադարեցված:

Ներքին գործարքները կատարվում են «ԱՐՄԵՆԲՐՈԿ»-ի սահմանած փոխարժեքներով:

Եթե Հաճախորդը պատվիրել է ներքին գործարք, սակայն «ԱՐՄԵՆԲՐՈԿ»-ը չունի տվյալ գործարքը կատարելու համար բավարար դրամական միջոցներ, ապա հաճախորդի պատվերը կարող է կատարվել արտաքին գործարքի միջոցով:

Ներքին գործարքի կատարման համար հաճախորդից միջնորդավճար չի գանձվում:

Արտաքին գործարքները կարող են կատարվել ինչպես բորսայում, այնպես էլ սպասարկող բանկերի միջոցով:

Արտաքին գործարքի կատարման դեպքում հաճախորդից գանձվում է միջնորդավճար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ պատվերում նշված պայմաններին համապատասխան գործարքների կատարման դեպքում արտարժույթի փոխարժեքային տատանումների հետ կապված ՌԻՍԿԸ ԿՐՈՒՄ Է ՀԱՃԱԽՈՐԴԸ: «ԱՐՄԵՆԲՐՈԿ»-ը ՉԻ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ հաճախորդի վնասները, եթե դրանք չեն պատճառվել ընկերության կողմից անբարեխիղճ վարքագծի արդյունքում:

6. Գործարքների իրականացման վայրերը

Հայաստանում արտարժույթով գործարքներ կարող են կատարվել ֆոնդային բորսայում, ինչպես նաև ֆոնդային բորսայից դուրս: Մեր ընկերությունը «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի անդամ է և ունի դրանում կազմակերպվող առևտրին մասնակցելու լիարժեք իրավունք: Միաժամանակ մենք կարող ենք գործարքներ իրականացնել նաև ֆոնդային բորսայից դուրս՝ չկարգավորվող շուկայում: Եթե հաճախորդի ներկայացրած պատվերում հստակ չի նշված գործարքի իրականացման վայրը, ապա մեր մասնագետները յուրաքանչյուր կոնկրետ գործարքը իրականացնելուց առաջ վերլուծում և որոշում են գործարքի կնքման ամենահարմար վայրը (ֆոնդային բորսայում, թե դրանից դուրս)՝ ղեկավարվելով ընկերության պատվերների կատարման քաղաքականությամբ, ինչպես նաև օրենսդրական սահմանափակումներով:

7. Շահերի բախման քաղաքականությունը

Այն դեպքում, երբ մենք հիմնավոր փաստերի հիման վրա հանգում ենք այն եզրակացությանը, որ մեր ընկերության և հաճախորդի կամ տարբեր հաճախորդների միջև հաճախորդների պատվերների կատարման ընթացքում կարող է առաջանալ շահերի բախում, ապա անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաճախորդի պատվերի կատարման պահը, հաճախորդին տեղյակ է պահում այդ մասին՝ առաջարկելով շահերի բախումից խուսափելու եղանակներ: Եթե հաճախորդը հրաժարվում է օգտագործել մեր կողմից իրեն առաջարկված շահերի բախումից խուսափելու եղանակները, իսկ շահերի բախումը կարող է առաջանալ ընկերության տարբեր հաճախորդների միջև, ապա հաճախորդների պատվերները կատարվում են ըստ դրանց ստացման հաջորդականության, անկախ այն բանից, որ դրա արդյունքում հաճախորդներից որևէ մեկը կարող է տուժել: Եթե շահերի բախումը առաջանում է մեր ընկերության և հաճախորդի միջև, ապա Հաճախորդի պատվերը կատարվում է այնպես, որպեսզի դրա արդյունքում տուժի ոչ թե հաճախորդը, այլ ընկերությունը:

8. Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը

Այս ծաեայությունից օգտվելու համար հաճախորդը պետք է ներկայացնի.

Ֆիզիկական անձի դեպքում.

- Հաշվի բացման հայտ՝ «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրենի սահմանած ձևով,
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- հանրային ծառայությունների համարանիշը հավաստող փաստաթղթի կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում՝ դրա բացակայությունը հավաստող տեղեկանքի պատճենը,
- Անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում գրանցման համարը և ՀՎՀՀ-ն կամ համարժեք այլ համարները ներառող փաստաթղթ(եր)ի պատճեն(ներ)ը,
- Հայտարարություն իրական շահառուի վերաբերյալ,
- Գրություն բնակության և հաշվառման վայրի մասին, եթե դրանք նշված չեն ներկայացված այլ

փաստաթղթերից որևէ մեկում,

- Գրություն կենսական շահերի կենտրոնի մասին, եթե հաճախորդն օտարերկրյա անձ է և կենսական շահերի կենտրոնը նշված չէ ներկայացված այլ փաստաթղթերից որևէ մեկում,
- Ընկերության որևէ ներքին իրավական ակտով պահանջվող ցանկացած այլ փաստաթուղթ:

Իրավաբանական անձի դեպքում.

- Հաշվի բացման հայտ՝ «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրենի սահմանած ձևով,
- Պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- ՀՎՀՀ-ն կամ համարժեք այլ համարը ներառող փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում),
- Հիմնադիր փաստաթղթի պատճենը,
- Առանց լիազորագրի հաճախորդի անունից հանդես գալու իրավասություն ունեցող ֆիզիկական անձանց ցանկը և նրանց նշանակումը հավաստող փաստաթղթերի պատճենները,
- Հայտարարություն իրական շահառուի վերաբերյալ,
- Նախորդ երկու կետերում նշված անձանց մասով ֆիզիկական անձանցից պահանջվող փաստաթղթերի պատճենները,
- Հաճախորդի թողարկած բաժնային արժեթղթերի քսան և ավելի տոկոսին տիրապետող անձանց ցանկը,
- Գրություն կենսական շահերի կենտրոնի մասին, եթե հաճախորդն օտարերկրյա անձ է և կենսական շահերի կենտրոնը նշված չէ ներկայացված այլ փաստաթղթերից որևէ մեկում,
- Ընկերության որևէ ներքին իրավական ակտով պահանջվող ցանկացած այլ փաստաթուղթ: